



ԹԱԳՈՒՎԻ ՕՇԱՆՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՆԵՂԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Վերջին տարիներին Հայաստանում լուրջ միջոցառումներ են իրականացվում գյուղատնտեսական վարկերի տրամադրման ուղղությամբ, որի նպատակն է նպաստել փոքր և միջին ֆերմերային տնտեսությունների խոշորացմանը և պայմաններ ստեղծել գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար:

Սակայն ուսումնասիրությունները վկայում են, որ պետության կողմից գյուղատնտեսության բնագավառին վերաբերող վարկային քաղաքականությունը չհանգեցրեց ցանկալի արդյունքի:

Պրա պատճառներից ամենահիմնականը, թերևս, այն է, որ վարկերը տրամադրվում են 3–10 մլն դրամի սահմաններում, ինչը հասանելի չէ հատկապես սահմանափակ հողատարածք ունեցող մանր գյուղացիական տնտեսություններին:

Ըստ այդմ՝ առաջարկվում է տրամադրվող վարկի նվազագույն շեմ սահմանել 1 մլն դրամը:

Հիմնաբառեր. վարկեր, վարկային քաղաքականություն, գյուղացիական տնտեսություններ, տնտեսավարող սուբյեկտ, գյուղատնտեսության ոլորտ

JEL: Q1, Q14, Q19

Յուրաքանչյուր երկրի տնտեսական բարեփոխումների կարևորագույն և բարդ խնդիրներից մեկը կայուն և արդյունավետ վարկային համակարգի ձևավորումն է: Պետականության տնտեսական բարգավաճումը կախված է բազմաթիվ գործոններից, որոնց շարքում առանձնահատուկ տեղ ունի կայացած վարկային համակարգը:

Դրամավարկային քաղաքականությունը տնտեսության կարգավորման և զարգացման կարևոր մեխանիզմներից է, որի արդյունավետ կիրառությունը կարևոր դերակատարում ունի տնտեսության վարկավորման և զարգացման գործընթացում:

Դրամավարկային քաղաքականության ուղղությունները քննարկելիս նշվում են վեց հնարավոր նպատակներ՝ զբաղվածության բարձր մակարդակ, տնտեսական աճ, գների կայունություն, տոկոսադրույքների կայունություն, ֆինանսական շուկաների կայունություն, արժույթային շուկաների կայունություն:

Հայաստանի պարագայում վարկային տոկոսադրույքների անհամեմատ բարձր մակարդակը դեռևս շարունակում է լուրջ խոչընդոտներ ստեղծել վարկավորման գործընթացում, երբ վարկերը, հիմնականում հասանելի լինելով ֆինանսապես ավելի կենսունակ և ապահովված տնտեսավարողներին, մնում են նվազ հասանելի առավել նպատակային հասցեատերերի համար, ովքեր սեփական բիզնեսը ծավալելու և զարգացնելու տեսանկյունից ֆինանսական ռեսուրսների պակաս ունեն: Թվում է, թե առողջ տրամաբանությունը պետք է միտված լիներ հակառակ իրավիճակի ձևավորմանը. վերջին հաշվով, վարկը որոշակի նպատակների իրագործմանը պակասող ֆինանսական միջոցների համալրման միջոց է, մինչդեռ խնդրին վերաբերող տեղական իրականությունն այլ է:

Սովորաբար վարկավորումն իրականացվում է մի շարք սկզբունքների պահպանման պայմաններում, որոնց թվում առանձնահատուկ նշանակություն ունեն վարկի վերադարձելիության, ժամկետայնության, տարբերակվածության, ապահովվածության և վճարելիության սկզբունքները: Դրանք վեր են հանում այն արմատական տարբերությունները, որոնք առկա են վարկի և դրամաշնորհի, նվիրատվության, ներդրման և ակտիվների փոխանցման այլ ձևերի միջև: Վարկավորման սկզբունքների խախտումը խեղաթյուրում է վարկի էությունը, դա կորցնում է իր նշանակությունը, ինչը բացասաբար է ազդում վարկատուի և վարկառուի տնտեսական գործունեության արդյունավետության վրա: Այս սկզբունքների խիստ և միաժամանակյա պահպանումը յուրաքանչյուր պետականության վարկային համակարգի կայունության պարտադիր նախապայմանն է, որոնց անտեսումը կարող է հանգեցնել նաև համապետական և գլոբալ ձգնաժամերի¹:

Վերջին տարիներին լուրջ միջոցառումներ են իրականացվում գյուղատնտեսական վարկերի տրամադրման ուղղությամբ, որի գլխավոր նպատակն է նպաստել փոքր և միջին ֆերմերային տնտեսությունների խոշորացմանը՝ պայմաններ ստեղծելով գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 12.06.2008 թ. N 706-Ն որոշմամբ հաստատվել էր «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման փորձնական նախագիծը»: Նախագծի գործողության ժամկետ էր սահմանվել մինչև 31.12.2010 թ.: Այդ նախագծով սուբսիդավորվել են ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի, Աշոցքի, Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանների 60 գյուղական և քաղաքային համայնքի այն տնտեսավարողներին տրամադրված վարկերի

¹ Стен Деньги, кредит, банки: опорный конспект лекций / Никитин В.М., Юдина И.Н., Барнаул: Изд-во «Азбука», 2004, էջ 49–53:

տոկոսադրույքները, ովքեր զբաղվում էին գյուղատնտեսական գործունեությամբ: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ նախագիծն ընդգրկում էր քիչ թվով տնտեսավարողների. ընդհանուր առմամբ, գյուղական համայնքների մոտավորապես 7%-ը:

2011 թվականին մեկնարկեց Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի վարկավորման գործընթացի երկրորդ փուլը: Այսպես՝ 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգի» համաձայն, մեր հանրապետությունում 01.04.2011 թվականից իրականացվել է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր: Ըստ այդ ծրագրի՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարողներին տրամադրվել է մինչև 3 մլն դրամ գումար՝ երկու տարի ժամկետով, տարեկան 14%-ով: ՀՀ Կառավարության կողմից սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքների 4 տոկոսային կետին, իսկ առավել կարիքավոր 225 համայնքների վարկառուների վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետին համարժեք մասը: Սկսած 2015 թվականից՝ ՀՀ Կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 139-Ն որոշմամբ հանրապետության բոլոր համայնքների համար սահմանվել է տոկոսադրույքների 6 տոկոսային կետին համարժեք մասի սուբսիդավորում:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների 6 տոկոսային կետին համարժեք սուբսիդավորման ծրագրի մեկնարկը տրվեց 2017 թվականի երրորդ եռամսյակից և շարունակվելու է մինչև 2021 թվականը:

Յուրաքանչյուր տարի ծրագիրն իրականացվել է երկու փուլով՝ հանրապետության բոլոր համայնքներում: Ինչպես մայր գումարի մարման, այնպես էլ տոկոսադրույքի վճարման համար 6-ամսյա արտոնյալ ժամկետ է սահմանվել: Ընդհանուր առմամբ, 30.04.2011–30.06.2017 թթ. ընկած ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 127.5 հազար միավոր վարկ՝ 106.4 մլրդ դրամ գումարով: Սուբսիդավորված գումարը կազմել է մոտավորապես 5.1 մլրդ դրամ²:

Հատկանշական է, որ, վարկի հետ կապված, ֆինանսական կառույցների ծառայությունների համար այլ վճարներ չեն գանձվում (կանխիկացման վճար, սպասարկման վճար, միջնորդավճար):

Վերը նշված ծրագրի հիմնական նպատակն էր նպաստել գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարողների կարողությունների ընդլայնմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը և, որպես վերջնական արդյունք՝ բնագավառի զարգացման արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Սակայն ուսումնասիրությունները վկայում են, որ պետության կողմից գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված վարկային քաղաքականությունը չհանգեցրեց ցանկալի արդյունքի: Այսպես՝ ուսումնասիրելով գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների ցանքատարածությունների աճի շարժընթացը 2013–2017 թթ.՝ արձանագրում ենք, որ 2017 թ., նախորդ տարիների համեմատությամբ, նկատվում է ցանքատարածությունների մակերեսի զգալի կրճատում (աղյուսակ 1):

² Տե՛ս Քաղվածք Հայաստանի Հանրապետության Կառավարության նիստի արձանագրությունից, 14.09.2017 թ., N 39:


Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունները 2013–2017 թթ. (հազ. հա)³

	2013	2014	2015	2016	2017
Ցանքային տարածությունը, որից՝	318.1	324.2	337.5	353.4	294.5
հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր,	178.4	185.5	193.1	198.1	155.2
որից՝ ցորեն	99.7	106.4	108.9	108.7	82.4
կարտոֆիլ	30.7	30	27.8	28.9	25.3
բանջարանոցային մշակաբույսեր	25.4	26.4	28.4	30.2	28.3
բոստանային մշակաբույսեր	5.4	5.8	6.8	7.3	6.8
պտուղ և հատապտուղ	40.2	40.1	40.3	40.5	42.3
խաղող	17.5	17.2	17.3	17.1	15.8

Պատկերը հատկապես մտահոգիչ է Տավուշի մարզում, որտեղ 2017 թ., 2016-ի համեմատությամբ, արձանագրվել է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսի նվազում 52%-ով (2016 թ. 10083 հա-ից 2017-ին հասնելով 4862 հա-ի):

Այս խնդրի առաջացման պատճառները շատ են, որոնցից նշենք հիմնականները.

1. աշխատուժի թվի նվազում,
2. առկա աշխատուժի ծերացում,
3. անբավարար ֆինանսական միջոցներ,
4. բարոյական և ֆիզիկական մաշվածության ենթարկված գյուղատնտեսական տեխնիկա,
5. շուկայի սպառողական հնարավորությունների նվազում:



Պատկեր 1. Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսը ՀՀ մարզերում 2016 և 2017 թթ.

³ Տե՛ս Պարենային ապահովություն և աղքատություն, 2017 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱԿԾ, 2018. http://www.armstat.am/file/article/f_sec_4_2017_00.pdf

Աղյուսակ 2

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունները 2016 և 2017 թթ. (հա)⁴

	Ցորեն		Կարտոֆիլ		Բանջարանոցային մշակաբույսեր		Բոստանային մշակաբույսեր		Պտուղ և հատապտուղ		Խաղող	
	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017
Արագածոտն	13449	11327	1850	1382	1270	809	283	173	6582	7382	1699	1253
Արարատ	5516	3472	914	796	6873	5793	1948	1537	8073	8015	5039	4713
Արմավիր	4424	3829	1601	1667	12186	12840	4816	4941	8652	9042	6882	6792
Գեղարքունիք	16779	14543	10239	9431	1689	1589	0	0	1403	1420	0	0
Լոռի	10841	8591	4613	4190	1800	1602	20	7	2293	2314	67	67
Կոտայք	6923	5357	923	886	1284	1169	0	0	4325	4380	160	169
Շիրակ	27437	21760	4556	3715	1896	1757	0	2	534	655	0	0
Սյունիք	15695	9598	1771	1670	1099	1047	1	0	2601	2609	185	179
Վայոց ձոր	1717	879	289	223	662	537	50	34	2139	2514	1066	1200
Տավուշ	5857	3054	2026	1287	1156	815	90	58	2580	2622	1349	1345

Վերը նշված խնդիրը լուրջ սպառնալիք է երկրի պարենային անվտանգությանը, ուստի անհրաժեշտ է օպերատիվ քայլեր ձեռնարկել դրա լուծման ուղղությամբ: Հասկանալի է, որ աշխատուժի թվի նվազման և ծերացման պատճառը երկրից հատկապես աշխատունակ տարիքի բնակչության արտագաղթն է: Հետևաբար՝ կարճ ժամանակահատվածում հնարավոր չէր հանրապետությունում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեին արտագաղթի նվազմանը:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ էր գյուղատնտեսության ոլորտին ցուցաբերել այնպիսի աջակցություն, որը կնպաստեր այդ ոլորտի աշխուժացմանն ու արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Ելնելով դրանից՝ ՀՀ Կառավարությունը մշակեց գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, ծրագրի գործարկումը դեռևս չի հանգեցրել սպասվող արդյունքի:

Դրա պատճառներից ամենահիմնականը, կարծում ենք, այն է, որ վարկերը տրամադրվում են 3-10 մլն դրամ գումարի սահմաններում, ինչը հասանելի չէ հատկապես սահմանափակ հողատարածք ունեցող մանր գյուղացիական տնտեսություններին:

Հաշվի առնելով վերը նշված ծրագրի շրջանակներում վարկերի տրամադրման մեխանիզմն ու գյուղացիական շատ տնտեսությունների՝ մանր հողակտորներ ունենալու հանգամանքը՝ կարծում ենք՝ անհրաժեշտ է տրամադրվող վարկի նվազագույն շեմ սահմանել 1 մլն դրամը:

Օգտագործված գրականություն

1. Քաղվածք Հայաստանի Հանրապետության Կառավարության նիստի արձանագրությունից, 14.09.2017 թ., N 39:
2. Պարենային ապահովություն և աղքատություն, 2017 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, 2018. http://www.armstat.am/file/article/f_sec_4_2017_00.pdf
3. Деньги, кредит, банки: опорный конспект лекций / Никитин В.М., Юдина И.Н., Барнаул: Изд-во «Азбука», 2004.

⁴ Աղյուսակը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ Պարենային ապահովություն և աղքատություն, 2017 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Եր., 2018 (<https://www.armstat.am/am/?nid=82&id=2010>):

ТАГУИ ОГАНЯН

Ассистент кафедры управления АГЭУ,
кандидат экономических наук

Проблемы кредитования сельскохозяйственных общин в РА. – В последние годы в Армении осуществляются серьезные мероприятия, связанные с предоставлением кредитов в сфере сельского хозяйства. Целью этих мероприятий является содействие укрупнению мелких и средних фермерских хозяйств, а также создание условий для развития сельского хозяйства.

Однако результаты проведенных исследований свидетельствуют о том, что кредитная политика государства, осуществленная в сфере сельского хозяйства, не привела к ожидаемым результатам.

По нашим убеждениям, главной причиной этого является то, что кредиты выдаются хозяйствующим субъектам в размере 3-10 млн драмов, что во многих случаях бывает недоступным тем сельским хозяйствам, которые обладают маленькими земельными участками.

Имея в виду механизмы предоставления кредитов в рамках вышеуказанной программы, а также то, что многие сельские хозяйства имеют маленькие земельные участки, считаем, что нужно минимальную сумму предоставляемого кредита снизить до 1 млн драм.

Ключевые слова: кредиты, кредитная политика, хозяйствующий субъект, сельские хозяйства, сфера сельского хозяйства.

JEL: Q1, Q14, Q19

TAGUHI OHANYAN

Assistant at the Chair of Management at ASUE, PhD in Economics

The Problems of Farm Crediting in the RA. – Serious measures of providing agricultural loans have been implemented in Armenia during recent years aimed at fostering the expansion of small and medium-sized farms and creating conditions for the development of the agricultural sector.

However, the studies indicate that the state credit policy towards the agricultural sector have not produced a desired result.

The main reason for this is probably the fact, that only loans within limits of 3-10 million drams are provided, which are not accessible for small farms with limited land area.

Taking into consideration the mechanism of crediting within the framework of the above mentioned program and the fact that many farmers have small land plots, we think that it is necessary to set 1 million drams as the minimal threshold amount for loans.

Key words: loans, credit Policy, farms, business, agriculture.

JEL: Q1, Q14, Q19